Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Շաղաթի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ – ի տեխնոլոգիայի /աղջիկների խումբ/ (4 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 – ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 9^{00}– 16^{00} - ը , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենա սեպտեմբերի 19–ին՝ ժամը 12^{00}–ին Սյունիքի մարզի Շաղաթի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝(077) 38-67-65 հեռախոսահամարով: